



Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N. 38
< 23 02 > 2018թ.

ք. Արտաշատ

Ն Ե Ր Ք Ի Ն Ա ՈՒ Դ Ի Տ Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Ն Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2018 թվականի տարեկան ծրագրով.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Դեղձուտի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2018 թվականի փետրվարի 26-ից մինչև մարտի 1-ը ներառյալ՝ 4 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Դեղձուտի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2015, 2016 և 2017 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ